1000 խոշոր հարկատուների կողմից 2020թ. հունվար-դեկտեմբեր ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի վերլուծություն

2020թ. հունվար-դեկտեմբեր ամիսներին 1000 խոշորագույն հարկատուների կողմից պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծությունը կազմել է շուրջ 988 մլրդ դրամ, ինչը 6,9%-ով պակաս է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից, սակայն շուրջ 50 մլրդ դրամով գերազանցում է 2018թ. մակարդակը (գծապատկեր 1):



Գծապատկեր 1. Հունվար-դեկտեմբեր ամիսներին 1000 խոշորագույն հարկատուների կողմից ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարը, մլրդ դրամ

2020-ին 1000 խոշոր հարկատուների մասնաբաժինը պետական բյուջեի հարկային եկամուտների կառուցվածքում կազմել է 71,3%, ինչը ցածր է 2018 և 2019 թվականների մակարդակից (գծապատկեր 2):



Գծապատկեր 2. Հունվար-դեկտեմբեր ամիսներին 1000 խոշորագույն հարկատուների կողմից ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի տեսակարար կշիռը ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների ընդհանուր կառուցվածքում, տոկոսներով

2020-ի հունվար-դեկտեմբեր ժամանակահատվածում 10 խոշորագույն հարկատուները պետական բյուջե են վճարել մոտ 257 մլրդ դրամ հարկ, ինչը գրեթե հավասար է նախորդ տարվա մակարդակին: Մյուս կողմից, 2020թ., նախորդ երկու տարիների համեմատությամբ, նվազել է 50 և 100 խոշորագույն հարկատուների կողմից պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծությունը: Օրինակ, 100 խոշոր հարկատուները, 2019թ. համեմատ, վճարել են 56 մլրդ դրամով պակաս հարկ (գծապատկեր 3):



Գծապատկեր 3. Հունվար-դեկտեմբեր ամիսներին 10, 50 և 100 խոշորագույն հարկատուների կողմից ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարը, մլրդ դրամ

Որոշակի նվազում է արձանագրել նաև 1000 խոշորագույն հարկատուների ցանկի վերջնամասում տեղ զբաղեցնող ընկերությունների կողմից վճարված հարկերի

մեծությունը: Այսպես, ցանկի վերջին հարյուրյակում գտնվող հարկատուների վճարումները 2020թ. հունվար-դեկտեմբեր ամիսներին կազմել է 17 մլրդ դրամ՝ 2019-ի 17,7 մլրդ դրամի փոխարեն (գծապատկեր 4): Այնուհանդերձ, 2018թ. համեմատությամբ 2020-ին հարկերի հավաքագրումը զգալիորեն բարձր է:



Գծապատկեր 4. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ներառված 10, 50 և 100 փոքրագույն հարկատուների կողմից հունվար-դեկտեմբեր ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարը, մլրդ դրամ

Հատկանշական է, որ 1000 հարկատուների ցանկում վերջին տեղերը զբաղեցնող ընկերությունների կողմից պետական բյուջե վճարված հարկերի մեծության նվազումը ավելի ցածր տեմպ է գրանցել, քան խոշորներինը: Այսպես, 100 խոշորագույն հարկատուները 2020թ. հունվար-դեկտեմբեր ամիսներին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, վճարել են 8,2%-ով ավելի քիչ հարկ, իսկ 1000 խոշորագույն հարկատուների ցանկի վերջին հարյուրակի պարագայում նույն ցուցանիշը կազմել է 4,0%:

1000 հարկատուների ցանկում առաջին և վերջին 100-յակի ընկերությունների կողմից պետական բյուջե վճարված հարկերի մեծության հարաբերակցությունը 2020թ. կազմել է 35 անգամ, նախորդ տարի՝ 36 անգամ, 2018-ին՝ 39 անգամ: Առաջին և վերջին տասնյակի հարկատուների վճարած հարկերի հարաբերակցությունը 2020-ին 160 անգամ է, ինչը ավելին է, քան նախորդ տարվա հարաբերակցությունը, սակայն պակաս է 2017 և 2018 թվականների մակարդակից (գծապատկեր 5): Սա վկայում է 1000 հարկատուների ցանկում ստորին հորիզոնականներ զբաղեցնող ընկերությունների տնտեսական ակտիվության ավելի դանդաղ կրճատման մասին:



Գծապատկեր 5. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ներառված 10, 50 և 100 խոշորագույն և փոքրագույն հարկատուների կողմից հունվար-դեկտեմբեր ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարի հարաբերակցությունը, անգամ

2020թ. 12 ամիսների արդյունքներով ՀՀ-ում գործող 177 ընկերություն վճարել է 1 մլրդ դրամից ավելի հարկեր: 2019-ին այդպիսի ընկերությունների թիվը 14-ով ավելի էր, սակայն 2018-ին և 2017-ին՝ անհամեմատ պակաս (համապատասխանաբար 166 և 141): Նկարագրված միտումն առկա է նաև մինչև 500 մլն դրամ հարկ վճարած ընկերությունների պարագայում: Այդպիսիք 2020-ին 347-ն են:

Հետաքրքրական է, որ 2017թ. 1000 հարկատուների ցանկում ընդգրկված ընկերություններից 385-ը վճարել է 200 մլն դրամից պակաս հարկ: 2018-ին այդպիսի ընկերությունների թիվը արդեն 280 էր, 2019-ին՝ 150, իսկ 2020թ-ին՝ 196 (գծ. 6):



Գծապատկեր 6. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ներառված հարկատուների թվաքանակը՝ ըստ հունվար-դեկտեմբեր ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարի մեծության

Հետաքրքրական է, որ 2020թ. հունվար-դեկտեմբերի արդյունքներով 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ներառվելու համար պետք էր վճարել ավելի քան 156 մլն դրամի հարկ, 2019-ին՝ 168 մլն դրամ, 2018-ին՝ 138 մլն դրամից մի փոքր ավելի, իսկ 2017-ին՝ դրա համար բավարար կլիներ ընդամենը 114,4 մլն դրամի չափով հարկային պարտավորության կատարումը:

2020-ի արդյունքներով, ՀՀ-ում 220 ընկերության պարագայում շահութահարկի վճարումը գերազանցել է 100 մլն դրամը, մինչդեռ նախորդ տարի այդպիսի ընկերությունների թիվը 29-ով շատ էր: Միևնույն ժամանակ եկամտային հարկի պարագայում նույն շեմը գերազանցած ընկերությունների թիվը 2019-ի համեմատությամբ նույնիսկ 14-ով ավելացել է՝ կազմելով 376 միավոր: Սա նշանակում է, որ ընթացիկ տարում տնտեսական ակտիվության զսպմանը նպաստած ճգնաժամային դրսևորումները ավելի մեծ ռիսկեր են պարունակում շահութահարկի, քան եկամտային հարկի բազայի կրճատման համար (գծապատկեր 7):



Գծապատկեր 7. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ընդգրկված ընկերությունների թիվն ըստ հունվար-դեկտեմբեր ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված շահութահարկի և եկամտային հարկի մեծության

Մեկ այլ կարևոր միտում է 1000 հարկատուների ցանկում ընդգրկված ընկերությունների կողմից ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծության կառուցվածքում ուղղակի հարկերի (շահութահարկ և եկամտային հարկ) տեսակարար կշռի նվազումը: 2020թ. 1000 հարկատուների վճարած հարկերի ընդհանուր մեծության 33,3%-ը կազմել են ուղղակի հարկերը, մինչդեռ նախորդ տարի այս ցուցանիշն ավելի մեծ էր՝ 35,6%: Կարելի է արձանագրել, որ ընթացիկ տարվա տնտեսական ճգնաժամի կարևոր հետևանքներից է նաև ընկերությունների հարկային

պարտավորությունների կառուցվածքում ուղղակի հարկատեսակների դերակատարության որոշակի թուլացումը՝ նախորդ երկու տարիներին գրանցված աճի համապատկերում (գծապատկեր 8):



Գծապատկեր 8. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ընդգրկված ընկերությունների կողմից հունվար-դեկտեմբեր ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված ուղղակի հարկերի տեսակարար կշիռը վճարված հարկերի ընդհանուր մեծության կառուցվածքում, %

2020թ. հունվար-դեկտեմբեր ամիսներին 63 ընկերություն վճարել է 1 մլրդ դրամը գերազանցող ուղղակի հարկեր: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում այդպիսի ընկերությունների թիվը 68 էր, իսկ 2017-ին՝ 45:

2020թ. արդյունքներով, 134 ընկերության ուղղակի հարկի վճարումները գերազանցել են 500 մլն դրամը: Նախորդ տարի կար 145 այդպիսի հարկատու, իսկ երկու տարի առաջ՝ 118:

2020թ. 100 մլն դրամը գերազանցող չափով ուղղակի հարկեր են վճարել 537 ընկերություններ, 18-ով պակաս, քան 2019-ին: Սակայն վերստին այս ցուցանիշը 2018-ի համեմատությամբ շարունակում է զգալիորեն բարձր լինել (գծապատկեր 9):



Գծապատկեր 9. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ընդգրկված ընկերությունների թիվն ըստ հունվար-դեկտեմբեր ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված ուղղակի հարկերի մեծության

Այսպիսով, 2020թ. հունվար-դեկտեմբեր ժամանակահատվածում 1000 հարկատուների ցանկի առաջին հարյուրակում տեղ զբաղեցրած միջին վիճակագրական ընկերության՝ ՀՀ պետական բյուջե կատարված հարկային վճարումների կազմն ու կառուցվածը զգալիորեն տարբերվում են նախորդ տարիների պատկերից:

Առաջին 100-յակի միջին վիճակագրական հարկատուն 2020-ին վճարել է 5.9 մլրդ դրամի հարկ (2019-ին՝ 6.4 մլրդ դրամ, 2018-ին՝ 5.8 մլրդ դրամ, 2017-ին՝ 5.0 մլրդ դրամ), որից շահութահարկը՝ 804 մլն դրամ (2019-ին՝ 1.1 մլրդ դրամ, 2018-ին՝ 1 մլրդ դրամ), եկամտային հարկը՝ 1 մլրդ դրամ (2019-ին՝ 1,04 մլրդ դրամ, 2018-ին՝ 890 մլն դրամ), ԱԱՀ-ն՝ 2,4 մլրդ դրամ (2019-ին՝ 2,58 մլրդ դրամ, 2018-ին՝ 2,39 մլրդ դրամ), ակցիզային հարկը՝ 970 մլն դրամ (2019-ին՝ 979 մլն դրամ, 2018-ին՝ 800 մլն դրամ):

Վերջին 100-յակի միջին վիճակագրական հարկատուն 2020թ. արդյունքներով վճարել է 170 մլն դրամի հարկ (2019-ին՝ 177 մլն դրամ, 2018-ին՝ 148 մլն դրամ, 2017-ին՝ 122 մլն դրամ), շահութահարկը՝ 20 մլն դրամ (2019-ին՝ 22 մլն դրամ, 2018-ին՝ 19 մլն դրամ), եկամտային հարկը՝ 52 մլն դրամ (2019-ին՝ 46 մլն դրամ, 2018-ին՝ 41 մլն դրամ), ԱԱՀ-ն՝ 80 մլն դրամ, (2019-ին՝ 84 մլն դրամ, 2018-ին՝ 70 մլն դրամ):

Աղյուսակ 1-ում ներկայացված է 1000 հարկատուների ցանկի վերին հորիզոնականներում տեղ զբաղեցրած մի շարք ընկերությունների կողմից հունվար-դեկտեմբեր ամիսներին պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծության դինամիկան 2017-2020թթ. ընթացքում: Աղյուսակում մեծամասնություն են կազմում այն

ընկերությունները, որոնք նախորդ տարվա համեմատությամբ ավելի քիչ հարկ են վճարել: Մյուս կողմից, հատուկենտ են այնպիսիք, որոնց հարկային վճարումները 2020-ին պակաս են 2018-ի մակարդակից:

Աղյուսակ 1. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ընդգրկված առանձին ընկերությունների կողմից հունվար-դեկտեմբեր ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծությունը

Հարկատուի անվանումը	Մլրդ դրամ				Աճը, %	
	2017	2018	2019	2020	2020/ 2019	2020/ 2018
«ԳՐԱՆԴ ՏՈԲԱԿՈ»	34.7	42.2	57	50.7	-11.1	20.1
«ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ»	39.7	40.1	43.6	45.5	4.5	13.6
«ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆՁԱՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ»	18.7	51.1	51.4	41.7	-18.9	-18.4
«ԳԵՈՊՐՈՄԱՅՆԻՆԳ ԳՈԼԴ»	13.5	16.1	13.7	23.0	68.0	43.0
«ԻՆՏԵՐՆԵՅՇՆԼ ՄԱՍԻՍ ՏԱԲԱԿ»	11.4	13.1	19.2	18.8	-2.1	43.5
«ՍԻՓԻԷՍ ՕԻԼ»	12.6	18.3	14	18.0	28.6	-1.7
«ՖԼԵՇ»	12.5	11.5	16	16.1	0.5	39.8
«ՖԻԼԻՊ ՄՈՐՐԻՍ ԱՐՄԵՆԻԱ»	11.6	13.5	13.7	15.2	11.1	12.8
«ՋԵՅ ԹԻ ԱՅ ԱՐՄԵՆԻԱ»	12	14	16.4	14.7	-10.3	5.0
«ՄՏՍ ՀԱՅԱՍՏԱՆ»	9.1	6.8	9.9	13.0	31.5	91.4
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ»	22	10.7	12.2	10.8	-11.8	0.5
«ՅՈՒՔՈՄ»	6	6.4	8.9	8.2	-7.6	28.6
«ԱԼԵՔՍ ԷՆԴ ՀՈԼԴԻՆԳ»		2.9	6.9	7.9	14.4	172.2
«ԱԴԱՄԻՈՒՄ»	5.9	6.3	9.7	7.8	-19.5	24.0
«ՄԱՔՍ ՊԵՏՐՈԼ»	2.9	6	9.1	7.8	-14.4	29.8
«ՍԻԹԻ»		2.2	7.5	7.5	-0.1	240.5
«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ»	8.4	9.2	6.3	7.3	15.3	-21.1
«ԱՎԵՐՍ»	4.9	7.6	7.6	7.1	-7.2	-7.2
«ԱԿՎԻԼՈՆ ԹՐԵՅԴ»	1.7	11.1	10.9	6.5	-39.9	-41.0
«ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ «ՏՐԱՆՍԳԱԶ»	5.7	6.1	5.8	5.6	-3.0	-7.8
«ԲԱՂՐԱՄՅԱՆ»		2.24	5.3	5.6	5.9	150.6
ԱՄԵՐԻԱԲԱՆԿ	4	6.5	8.5	5.5	-34.9	-14.8
ԱԿԲԱ ԲԱՆԿ	4.1	6.5	6.7	5.5	-18.0	-15.5
«ԿՈԿԱ-ԿՈԼԱ ՀԵԼԼԵՆԻԿ ԲՈԹԼԻՆԳ ՔԱՄՓՆԻ ԱՐՄԵՆԻԱ»	3.9	5.4	5.6	5.3	-4.6	-1.1
«ԻՄԷՔՍ ԳՐՈՒՊ»	4.2	4.7	5.9	5.1	-13.3	8.8
ՆԱՏԱԼԻ ՖԱՐՄ	3.6	4.9	5.4	5.0	-7.8	1.6
«ՍՊԱՅԿԱ»	1.8	4.6	5.2	5.0	-4.6	7.8
ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ ՓԲԸ	3.3	4.2	5	4.8	-4.1	14.1
«ԳՐԱՆԴ ՄԱՍՏԵՐ»	3.9	6.2	6.4	4.8	-25.1	-22.7
«ԳՐԱՆԴ ՔԵՆԴԻ»	5.3	5.2	6.3	4.8	-24.2	-8.2
«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ»	4.3	4.4	5.2	4.7	-9.0	7.6
«ԲԱՐՍԻՍ»	3.8	4	4.7	4.5	-4.8	11.8
«ՄՈԲԱՅԼ ՍԵՆԹՐ ԱՐԹ»	4.4	5.1	5.7	4.4	-22.7	-13.6

Հարկատուի անվանումը	Մլրդ դրամ				Աճը, %	
	2017	2018	2019	2020	2020/ 2019	2020/ 2018
ԱՐԴՇԻՆԲԱՆԿ	4.7	4.6	4.6	4.1	-11.6	-11.6
«ՀԱՐԱՎԿՈՎԿԱՍՅԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ»	3.9	4	4.3	4.0	-6.8	0.2
«ՍԱՍ-ԳՐՈՒՊ»	2.2	3	4	3.9	-3.1	29.1
«ԹԵՂՈՒՏ»	11.6	4	2	3.7	87.2	-6.4
ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ	2.5	3.8	3.6	3.7	3.0	-2.4
Ընդամենը ըստ դիտարկվող հարկատուների	305	379	434	418	-3.8	10.3

ԱՄՓՈՓՈՒՄ

1000 հարկատուների ցանկում ներառված կազմակերպությունների կողմից պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծությունը 2020թ. արդյունքներով զգալի ծավալային և կառուցվածքային փոփոխություններ է արձանագրել՝ նախորդ տարիների նույն ժամանակահատվածի համեմատությամբ.

- ✓ վճարված հարկերի ընդհանուր մեծությունը նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 6.9%-ով,
- ✓ 100 խոշորագույն հարկատուների կողմից վճարվել է 587 մլրդ դրամի հարկ, որը 56 մլրդ դրամով պակաս է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից, սակայն մոտ 10 մլրդ դրամով գերազանցում է 2018թ. մակարդակը,
- ✓ 1000 հարկատուների ցանկում ներառված 100 ամենափոքր ընկերությունները 2020-ին վճարել են 17.0 մլրդ դրամ կամ նախորդ տարվա համեմատությամբ՝ 0.7 մլրդ դրամով պակաս (2018-ի համեմատությամբ՝ 2,2 մլրդ դրամով ավելի),
- ✓ 1000 հարկատուների ցանկում ներառված ընկերությունների վճարած հարկերի անհամաչափության աստիճանի որոշակի աճ է արձանագրվել: Ցանկի ամենախոշոր և ամենափոքր 10 ընկերությունների վճարած հարկերի ընդհանուր մեծության հարաբերակցությունը 2020թ. կազմել է 160 անգամ, նախորդ տարվա 152 և 2018-ի 169 անգամի համեմատությամբ: Ամենախոշոր և ամենափոքր 100 ընկերությունների պարագայում նույն հարաբերակցությունը 2020-ին կազմել է 35, փոքր-ինչ ցածր է նախորդ տարվա արդյունքից, և զգալիորեն ցածր է 2017 և 2018թթ. մակարդակից,
- ✓ 2020թ. արդյունքներով ՀՀ-ում գործել է 1 մլրդ դրամից ավելի հարկեր վճարած 177 ընկերություն: Նախորդ տարում այդպիսի ընկերությունների թիվը էր, 2018-ին՝ 166, 2017-ին՝ 141,
- ✓ 2020թ. 500 մլն դրամից ավելի հարկեր վճարած ընկերությունների թիվը 347 է, 2019-ին եղել է 361, 2018-ին՝ 320, 2017-ին՝ 285,

- ✓ 2020թ.-ին 220 ընկերության վճարած շահութահարկի մեծությունը գերազանցել է 100 մլն դրամը: Նախորդ տարվա համեմատ այդպիսի ընկերությունների թիվը պակասել է 29-ով: 2018-ին կար այդպիսի 212 ընկերություն:
  Եկամտային հարկի պարագայում 100 մլն դրամի շեմը 2020թ. գերազանցել է 376 ընկերություն, 2019-ին՝ 362, 2018-ին՝ 331:
- ✓ Մեկ այլ կարևոր միտում է 1000 հարկատուների ցանկում ընկդգրկված ընկերությունների կողմից ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծության կառուցվածքում ուղղակի հարկերի (շահութահարկ և եկամտային հարկ) տեսակարար կշռի որոշակի նվազումը: 2020թ.-ին 1000 հարկատուների վճարած հարկերի ընդհանուր մեծության 33,3%-ը կազմել են ուղղակի հարկերը: Նախորդ տարի այս ցուցանիշը շուրջ 35,6% էր, 2018-ին՝ 35,7%:
- ✓ 2020թ.-ին 100 մլն դրամը գերազանցող չափով ուղղակի հարկեր են վճարել 537 ընկերություններ, 2019-ին ՀՀ-ում գործել է այդպիսի 555 ընկերություն, 2018-ին՝ 497, 2017-ին՝ 425 ընկերություն,
- ✓ 2020թ. 1000 հարկատուների ցանկի առաջին 100 ընկերությունները պետական բյուջե են վճարել միջինում (1 ընկերության հաշվով) 5.9 մլրդ դրամի հարկ (2019-ին՝ 6.4 մլրդ դրամ, 2018-ին՝ 5.8 մլրդ դրամ, 2017-ին՝ 5.0 մլրդ դրամ), որից շահութահարկը՝ 804 մլն դրամ (2019-ին՝ 1.1 մլրդ դրամ, 2018-ին՝ 1 մլրդ դրամ), եկամտային հարկը՝ 1 մլրդ դրամ (2019-ին՝ 1,04 մլրդ դրամ, 2018-ին՝ 890 մլն դրամ), ԱԱՀ-ն՝ 2,4 մլրդ դրամ (2019-ին՝ 2,58 մլրդ դրամ, 2018-ին՝ 2,39 մլրդ դրամ), ակցիզային հարկը՝ 970 մլն դրամ (2019-ին՝ 979 մլն դրամ, 2018-ին՝ 800 մլն դրամ),
- ✓ 1000 հարկատուների ցանկի վերին հորիզոնականներում տեղ զբաղեցրած, հանրային որոշակի հետաքրքրություն ներկայացնող ընկերությունների մի ստվար հատված 2020թ., նախորդ տարվա համեմատ, նվազեցրել է պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծությունը: Այնուհանդերձ, նույնիսկ անկման պայմաններում, դիտարկվող ընկերությունների կատարած հարկային վճարումները էականորեն բարձր են 2017 և 2018թվականների արդյունքներից: